ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

idcarmenia@gmail.com
http://www.foi.am/hy/IDC/

ք. Երևան
5.12.2012

ԿԱՐԾԻՔ

«Հրազդան» հեռուստաընկերության տնօրեն, լրագրող Մնացական Հարությունյանի դեմ Գագիկ Աթասյանի հայցի հիման վրա հարուցված դատական գործի վերաբերյալ

1. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

18/01/2012թ.-ին «Առավոտ» օրաթերթում հրապարակվել է Մնացական Հարությունյանի հեղինակած *«Բացահայտում. «Տարվա քաղաքացու» իրական դեմքը»* վերնագրով հոդված, որով հոդվածագիրը հերքել է Հրազդանի բնակիչ Գագիկ Աթասյանի մի շարք հրապարակային հայտարարություններն, մասնավորապես, որ կինոյի և թատրոնի ճանաչված գործիչ է, իր ուժերով կարողացել է հայթայթել 7 մլն ԱՄՆ դոլար Ղարաբաղի հակամարտության մասին ֆիլմ նկարահանելու համար, որ ֆիլմի սցենարը պատրաստ է և դերասանների ընտրությունը կատարված, և որ այդ մասին տեղյակ են կառավարության մի շարք մարմիններ և խոստացել են աջակցել այդ ծրագրի իրագործմանը: 2011 թվականի ընթացքում շատ լրատվամիջոցներ՝ տպագիր մամուլը և առցանց բազմաթիվ լրատվամիջոցներ, դրական լույսի ներքո լայնորեն անդրադարձել էին Գագիկ Աթասյանի հրապարակային հայտարարություններին և դրանք, ընդհանուր առմամբ, ողջունել:[1] Մնացական Հարությունյանն իր հոդվածով, փաստորեն, հերքել է բոլոր այդ հայտարարությունները և հրապարակայնորեն մեղադրել Գագիկ Աթասյանին ստախոսության և հանրությանը մոլորության մեջ գցելու մեջ:

[1] Տե՛ս, օրինակ, հետևյալ հրապարակումները առցանց լրատվամիջոցներում. <http://aysor.info/am/news/1419, http://www.hraparak.am/29695/>, <http://www.hraparak.am/33510/>, <http://www.armtown.com/news/am/ays/20110611/201106112/>, <http://ankakh.com/2011/08/137303/>, <http://aravot.am/old/am/articles/entertainment/87385/view>, <http://www.sobesednik.am/am/social/485-2011-08-13-13-15-16>, <http://www.a1plus.am/am/social/2011/09/05/tekuz>, <http://haynews.am/hy/archive-59098>, <http://neonews.am/index.php/news/article/view/26/4101/>,<http://www.irates.am/hy/i8ie0KcPNr9BjZwcGaGvoHqlEX>, <http://www.1in.am/arm/print.armenia_arts_6192.html> և այլն: ,

«Առավոտ» օրաթերթի հրապարակումից հետո 2012 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում «Հրապարակ», «168 Ժամ», «Հետք» և «Միտք» օրաթերթերի ինտերնետ կայքերը հանդես են եկել նշված անձի հայտարարությունների հերքումով՝ իրենց էջերում հրապարակելով պատասխանողի հոդվածը՝ որոշակի մեկնաբանություններով:[2]

29/05/2012թ.-ին Գագիկ Աթայանը դիմել է Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան ընդդեմ Մնացական Հարությունյանի՝ հայտնելով, որ նշված հոդվածով պատասխանողը տարածել է իր անձը արատավորող վիրավորական և զրպարտող բնույթի հայտարարություններ և խնդրել է պարտավորեցնել պատասխանողին ներողություն խնդրել և վճարել 3 մլն դրամ փոխհատուցում՝ վիրավորանքի և զրպարտության դիմաց:

Հայցվորը հայցապահանջում նշել է, որ վիրավորական է համարում իր հասցեին ասված «շանտաժիստ, «գործ տվող, գործ սարքող անձնավորություն», «քրեական հանցագործ», «պադոնոկ», «անպատկառ», «լիրբ», «ավանտյուրիստ» և «ստախոս» արտահայտությունները, իսկ որպես զրպարտություն է համարել պատասխանողի պնդումները, թե իբր հայցվորը ստել է ՀՀ մշակույթի նախարարությանը, ՀՀ նախագահի անձնակազմին և ողջ հանրությանն այն մասին, որ պատրաստվում է նկարահանել 7 մլն դոլար բյուջեով ֆիլմ Ղարաբաղի հակամարտության մասին, որ ինքը ունի լուրջ ձեռքբերումներ թատրոյի, կինոյի և մշակույթի բնագավառներում, որ ինքը մասնակցել է Ղարաբաղի պատերազմին, և այլն:

Ներկայումս դատաքննությունը շարունակվում է առաջին ատյանի դատարանում: Դատաքննության ընթացքում պատասխանողը ներկայացրել է հակընդեմ հայց՝ հայցվորի կողմից «Առավոտ» օրաթերթի կայքում կատարած *«Մնացական Հարությունյանն իմ հետ ունի անձնական խնդիր, և իրավախախտումները քողարկելու համար անցել է այլ տարբերակի»* և *«Գ. Աթայանը նաև ակնարկեց, որ տեսնում է միտումներ դատաքննությունն այլ ընթացքով տանելու»* մեկնաբանությունների համար՝ համարելով դրանք զրպարտող բնույթի հայտարարություններ և պահանջելով ի հօգուտ Մ. Հարությունյանի բռնագանձել 2 մլն ՀՀ դրամ և փոխհատուցել պետական տուրքի վճարած գումարը:

[2] Տե՛ս, օրինակ, http://www.hraparak.am/50849/ և http://archive.168.am/am/articles/30861-pr:

2. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Դատելով 2011-2012թթ..-ի ընթացքում տարբեր տեսակի լրատվամիջոցներով տարածված տեղեկատվության ծավալից, սփռվածության աստիճանից, բովանդակությունից, այդ թվում նաև՝ սոցիալական ցանցերում ընթացող քննարկումներից, որոնք ընդգրկել էին մեծ թվով քաղաքացիներ, Գագիկ Աթասյանի՝ 2011-2012թթ..-ի ընթացքում լրատվամիջոցներին տված հարցազրույցները առաջացրել էին հասարակական մեծ հետաքրքրություն: Իր հարզազրույցներում հայցվորը շոշափել է հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաներ՝ Ղարաբաղի հիմնահարցի վերաբերյալ իր կողմից պատրաստվող գեղարվեստական ֆիլմ, պետական մարմինների կողմից աջակցության մերժում, ադրբեջանական աղբյուրներից ստացվող սպառնալիքներ իր անձի նկատմամբ, ֆիլմում աշխարհահռչակ դերասանների ներգրավվածություն, և այլն: Շատ լրատվամիջոցներում և սոցիալական ցանցերում հնչում էին քննադատություններ պետական մարմինների, մասնավորապես, Մշակույթի նախարարության հասցեին ֆիլմի ֆինանսավորմանը չաջակցելու համար: Ընդհանուր առմամբ, իր գործողություններով Գագիկ Աթասյանը ձգտել է հանրայնացնել իր ծրագրերը և գաղափարները՝ այդպիսով հանրային ուշադրություն գրավելով իր սեփական անձի և գործողությունների վրա: Այսպիսով, հայցվորն ինքն է նպաստել, որպեսզի իր անձը հայտնվի հանրության համակ ուշադրության կենտրոնում և, հետևաբար, պետք է ակնկալի նաև իր անձի և գործողությունների նկատմամբ քննադատության լայն շրջանակներ՝ ավելի լայն, քան սովորական քաղաքացու դեպքում, ով չի ձգտում հանրային ուշադրութան առարկա դարձնել իր սեփական մտքերն ու ծրագրերը: Այս հանգամանքով է պայմանավորված նաև անձնական կյանքի պաշտպանվածության շրջանակները յուրաքանչյուր կոնկրետ դեպքում:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, հայցվորի նկատմամբ թույլատրելի քննադատության շրջանակները տվյալ դեպքում լայն են և այս լույսի ներքո է **Խորհուրդը ստորև գնահատում** վեճի առարկա հրապարակային հայտարարությունները:

Հոդվածագիրը հոդվածի մի զգալի հատվածում (պայմանականորեն անվանենք դա որպես հոդվածի առաջին մաս) հավաքական կերպով ներկայացրել է լրատվամիջոցների կողմից հայցվորի մասին տարածած տեղեկատվության ողջ ծավալը: Իր հերթին, լրատվամիջոցներն այդ տեղեկատվությունը ստացել են հայցվորից՝ վերջինիս հարցազրույցների և ասուլիսների ընթացքում: Թեև լրագրողը հոդվածում չի վկայակոչել աղբյուրները, սակայն դրանք լայնորեն հայտնի և հանրորեն մատչելի աղբյուրներ են և, հետևաբար, անհրաժեշտություն չկար դրանք շարունակ վկայակոչել

հոդվածում:[3] Այսպիսով, հոդվածի առաջին մասը լրատվական աղբյուրներից հավաքագրած և մշակած տեղեկությունների ամփոփ վերարտադրում էր և, այս իմաստով, լրագրողն օգտվում է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ մասի պաշտպանությունից: Այն հանգամանքը, որ հոդվածի այս մասում առկա են երգիծանքի որոշ տարրեր, միանգամայն տեղավորվում է լրագրողական ազատության շրջանակներում:

Հոդվածի երկրորդ մասում հոդվածագիրը կատարել է հարցադրումներ և այնուհետև արտահայտել կասկածներ հայցվորի կողմից հանրությանը տրամադրված տեղեկությունների իրականությանը համապատասխանելու վերաբերյալ: Հոդվածագրի համար և՛ հարցադրումների, և՛ կասկածների համար հիմք են եղել լրատվամիջոցներով տարածված տեղեկությունները, որոնք նա համադրել է մի կողմից իր սեփական հետաքննության արդյունքում ստացված փաստերի հետ, մյուս կողմից՝ այն փաստերի հետ, որոնք հանրորեն հայտնի են այն համայնքում, որտեղ բնակվում են հայցվորը և պատասխանողը (Հրազդան քաղաքը): Առաջինի դեպքում հոդվածագիրը պատշաճ կերպով նշել է իր աղբյուրները (օրինակ՝ Հրազդանի զինկոմի գրավոր և բանավոր պատասխանները, որով հերքվել է Ղարաբաղի հակամարտությանը մասնակցած լինելու հայցվորի հրապարակային հայտարարությունները), իսկ երկրորդը՝ համայնքում հանրահայտ հանգամանքներ են, որոնք ապացուցման ենթակա չեն (օրինակ, որ հայցվորը Հրազդան քաղաքում ձայներիզների կրպակավար է, որ զբաղվում է նաև տպիչների լիցքավորումով, այլ ոչ թե կինոարտադրությամբ, և այլն) և որոնք հայցվորը չի վիճարկում իր հայցով: Հետևաբար, հոդվածի այս մասը ներկայացված է լրագրողական բարեխղճության կանոնների պահպանմամբ:

Հոդվածի երրորդ մասում (հետգրության հատվածում) հոդվածագիրը, ամփոփելով նյութը, սուր արտահայտություններով, գնահատողական դատողությունների միջոցով քննադատության է ենթարկել հայցվորին՝ նրան հրապարակայնորեն մեղադրելով ստախոսության ու հանրությանը տևական ժամանակ մոլորության մեջ գցելու մեջ: Ի դեպ, հայցապահանջի առարկան հիմնականում հիմնված է հենց այս հատվածում կատարված հրապարակային արտահայտությունների հիման վրա: **Խորհուրդը հարկ է համարում** հոդվածի այս հատվածը գնահատել ավելի լայն շրջանակների ներքո՝ հոդվածի և դրա շուրջ ծավալված ողջ իրադարձությունների համատեքստում, որը տվյալ դեպքում հոդվածին նախորդող ժամանակահատվածում (մոտ կես տարի) հայցվորի բազմաթիվ հրապարակային ելույթներն էին ու դրանց արդյունքում հասարակական տարբեր միջավայրերում՝ սոցիալական ցանցերում, ԶԼՄ-ներում ու քաղաքացիական

[3] Տե՛ս տեղատակի ծանոթագրություն 1:

հասարակության տարբեր հարթակներում ծավալված հասարակական լայն քննարկումների ալիքը, որտեղից հանրության տարբեր շերտեր ողջունում էին հայցվորի նախաձեռնությունները և հայտնում իրենց աջակցությունը: Նման զարգացումների ֆոնի վրա հայցվորը որևէ փաստ կամ հիմնավորում չի ներկայացրել հանրությանն իր կողմից ներկայացված ծրագրերի, տեղեկությունների իրականությանը համապատասխանելու վերաբերյալ՝ թեև այդ առումով կար հասարակական պահանջ: Իրադարձությունների նման համատեքստում հոդվածից հնչեցված սուր քննադատությունը բխում էր հայցվորի դրսևորած վարքից, իսկ դա մի հանգամանք է, որը գտնվում է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի պաշտպանության տակ, ըստ որի՝ փաստի մասին հայտարարությունը չի համարվում զրպարտություն, եթե այն բխում է անձի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթից: Ինչպես վերևում նշվեց, օգտագործելով հանրային հարթակն իր գաղափարները և մտքերը հաղորդելու նպատակով, հայցվորը պետք է գիտակցեր, որ դրանով իր անձը, իր սեփական մտքերը, գաղափարները և գործողությունները դնում է հասարակության համակ ուշադրության՝ այդ թվում նաև հնարավոր քննադատության ներքո: Հոդվածի վերջում հնչեցված հրապարակային մեղադրանքները, այդ թվում նաև՝ հոդվածն իր ամբողջության մեջ, հաշվի առնելով հայցվորի հրապարակային հայտարարությունների և գործողությունների միջև անհապատասխանությունը, **Խորհուրդը գտնում է,** որ հոդվածում հնչեցված փաստի մասին հայտարարությունները և գնահատողական դատողությունները կատարվել են բավարար փաստական հիմքերի հիման վրա, դրանք պայմանավորված էին հայցվորի վարքագծով: Հետևաբար, հոդվածագիրը գործել է բարեխղճորեն ու մասնագիտական պահանջների շրջանակներում:

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Շուշան Դոյդոյան (Խորհրդի քարտուղար) - Տեղեկատվության ազատության կենտրոնի նախագահ

Մանանա Ասլամազյան -«Լրատվության այլընտրանքային ռեսուրսներ» ծրագրի տնօրեն

Բորիս Նավասարդյան – Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արամ Աբրահամյան - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

Արա Ղազարյան - «Արևի Քնսալթ» փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն